

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան

10 փետրվարի 2021թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Անդրանիկ Ալեքսանյան | 7. Լիաննա Գալստյան |
| 2. Աննա Կարախանյան | 8. Կարեն Գասպարյան |
| 3. Արամ Վերդյան | 9. Միսակ Խաչատրյան |
| 4. Արման Ներսիսյան | 10. Միրանուշ Վարդանյան |
| 5. Գրիգորի Սաղյան | 11. Քրիստինա Հակոբյան |
| 6. Իգոր Մկրտումյան | 12. Քրիստինե Գյունջյան |

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Քրիստինա Հակոբյանը:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության ձևը հաստատելու մասին:
2. Սեդա Սմբատյանին «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության ձևը հաստատելու մասին:

Նիստի մասնակիցներին ներկայացվեց կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության ձևը, նշվեց, որ այն կազմվել է՝ հիմք ընդունելով կազմակերպության կանոնադրության համապատասխան դրույթը և հաշվի առնելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Հարցի քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը միաձայն որոշեց՝

Որոշում՝ *Հաստատել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության ձևը:*


2. Սեդա Սմբատյանին «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին:

Նիստի մասնակիցները տեղեկացվեցին, որ թեև հիշեցումների կազմակերպության անդամ Սեդա Սմբատյանը չի վճարել 2021 թվականի համար նախատեսված անդամավճարը, ինչը վերջինիս դեպքում պետք է կատարվեր անդամագրվելու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում: Առաջարկվեց հեռացնել նրան կազմակերպությունից (զրկել անդամակցությունից):
Առաջարկությունը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:


Որոշում՝ 2021 թվականի անդամավճարը չվճարելու համար «Ինտերնետ հանրություն»
հասարակական կազմակերպությունից հեռացնել «Ինտերնետ հանրություն»
հասարակական կազմակերպության անդամ Սեդա Սմբատյանին:

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Քրիստինա Հակոբյան